Հրկ 8699

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ընդհ. ... բաժ.
№ 1505
29 APR 2021
Կից Նշում

«28» ապրիլ 2021թ. No 1513 - Ա

ՊԱԿԻՍՏԱՆԻ «ՀԵՐԲԻՈՆ ՊԱԿԻՍՏԱՆ ՊՎՏ. ՍՊԸ, ՊԼՈՏ NO 30 ՍԵԿՏՈՐ 28 ԿՈՐԱՆԳԻ ԻՆԴԱՍՏՐԻԱԼ ԱՐԵԱ, ԿԱՐԱՉԻ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ՀԵՐԲԻՈՆ ՊԱԿԻՍՏԱՆ ՊՎՏ. ՍՊԸ, ՊԼՈՏ NO 30 ՍԵԿՏՈՐ 28 ԿՈՐԱՆԳԻ ԻՆԴԱՍՏՐԻԱԼ ԱՐԵԱ, ԿԱՐԱՉԻ, ՊԱԿԻՍՏԱՆ») «ՆՈՎԵՔՍ ՊԱՐԱՑԵՏԱՄՈԼ, ՊԱՐԱՑԵՏԱՄՈԼ ԴԵՂԱԿԱԽՈՒՅԹ ՆԵՐՔԻՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵԼԱԿԻ ՀԱՄՈՎ 120ՄԳ/5ՄԼ; 120 ՄԼ ԱՊԱԿԵ ՇՇԻԿ» ԴԵՂԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 51-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 15.04.2021 թվականի N 0103035921 բացասական եզրակացությունը՝ Պակիստանի «Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30 Սեկտոր 28 Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30 Սեկտոր 28 Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի, Պակիստան») «Նովեքս Պարացետամոլ, պարացետամոլ դեղակախույթ ներքին ընդունման ելակի համով 120մգ/5մլ; 120մլ ապակե շշիկ» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ թիվ 19807 առ 15.04.2021թ. փորձագիտական բացասական եզրակացությունը, առ այն, որ գրանցված չէ հայտատուի կան ICH անդամ երկներում.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Արտաքս 29.04.2021 / $12^{00}$

1.Մերժել Պակիստանի «Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30 Սեկտոր 28 Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30 Սեկտոր 28 Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի, Պակիստան») «Նովեքս Պարացետամոլ, պարացետամոլ դեղակախույթ ներքին ընդունման ելակի համով 120մգ/5մլ; 120մլ ապակե շշիկ» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ջ. Դարբինյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

28.04.2021

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157